

ցաւ կռուի բովանդակ ընթացքին : Երբ արքեպիսկոպոսը դիմեց արտաքին պաշտպանութեան, յայտարարելով ինքզինքը կաթողիկէ, գտաւ աջակցութիւն : Որովհետեւ ունէր ձեռքը թագաւորական հաստատագիր, ուր կը ներկայանար Լեհաստանի մէջ ապրող Հայերու օրինաւոր հովիւ, թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական իշխանութիւնները պաշտպան հանդիսացան իր իրաւունքներուն : Մովսէս կաթողիկոս գտաւ ինքզինքը կատարուած իրողութեան մ'առջեւ . իր ոյժը չզօրեց հոսանքին առաջն առնել կամ ուրիշ ընթացք տալ իրաց :

33. ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴ ՄԷՋ ՀԱՅՈՑ ԵՒ
ՀՌՈՄԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ (1600—1626)

Կաթողիկոսական աթոռին էջմիածին վերահաստատուելէն ետքը, առաջին անգամ Սալմաստեցի Ստեփանոս կաթողիկոսն (1543—1551) եղաւ, որ յարարերութեան մէջ մտաւ Հռոմայ Քահանայապետին հետ : Իր նպատակն էր միջնորդութեամբ վատիկանի շարժել եւրոպական պետութիւնները, նիւթական, բարոյական եւ զինուորական ուժերով օգնելու Հայոց, որպէս զի կարենան թօթափել պարսկական ծանր լուծն եւ ձեռք բերել քաղաքական ազատութիւն : Առ այս կարեւոր համարեցաւ Կաթողիկոսը, նաեւ անձամբ ներկայանալ Հռոմայ Քահանայապետին եւ Եւրոպական իշխանութիւններու : Դժբախտաբար ի դերեւ ելան մչակուած այս բոլոր ծրագիրները, որովհետեւ Ստեփանոս Սալմաստեցի